

9495

965-6

84

ՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ

ԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 13

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՏԱԲՆ Ե

Թարգմ. Ե.

ЗКУИ

4-68

ԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

3KUI
4-68

25 SEP 2006
1 DEC 2009

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ

№ 13 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 13



ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՏԱԲՆ Ե



Թարգմ. Ե.

15967

(1155)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1927

22 MAY 2013

9495

Գրառեպլար № 97-բ հ. 517 Տիրած 4000
Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանում—254

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՇՏԱԲՆ Ե

1. Դեպի միասնական համաեխադհային կոմ-
մունիստական կուսակցություն

Ինչպես և ԿՈՄԻՆՏԵՐՆԸ Կոմիւնտերնը ղեկավարում է
ԿՈՄԻՆՏԵՐՆԸ բանվորների միջազգային հե-
ղափոխական շարժումը: Ամբողջ աշխարհի պրոլետար-
ներին համախմբում է ընդհանուր թշնամու—կապի-
տալի դեմ մղած պայքարը: Կոմիւնտերնը կազմակեր-
պում է միջազգային պրոլետարիատի ուժերը կապի-
տալիզմի տապալման համար: Մեր յերկրի բանվոր դա-
սակարգը հաղթանակել է բուրժուազիային, վորովհե-
տե նրա (բանվոր դասակարգի) պայքարը ղեկավարել
է կոմմունիստների-բայլերիկների միասնական, կենտ-
րոնացած կուսակցութիւնը: Բանվոր դասակարգը կա-
րող է հաղթանակել միջազգային մասշտաբով, յեթի պայ-
քարի գլուխ կը լինի կանգնած ԿԵՆՏՐՈՆԱԳԱԾ, գիս-
ցիպլինայի յեճարկված համաեխադհային կոմմու-
նիստական կուսակցութիւնը:

Ինչպես և մեր կուսակցութիւնը, Կոմիւնտերնը
կառուցված է ղեմուկրատական կենտրոնացման հիմուն-
քով: Առանձին յերկրների կոմմունիստական կուսակ-
ցութիւնները (Կոմիւնտերնի սեկցիաները) պետք է ա-
ռանց ընդիմանալու կիրառեն Կոմիւնտերնի ղեկավար

333-95

ցուցումները: Այնքան, վորքան այս կամ այն հարցի առթիվ Կոմիտեներնի կոնգրեսը (միջազգային համագումարը) վորոշում է հանել, ապա նա հետագա քննություն չենթակա չի և պետք է կենսագործվի: Կոնգրեսների միջև ընկած ժամանակամիջոցում ամբողջ ղեկավարությունը լիովին պատկանում է Կոմիտեներնի Գործադիր Կոմիտեին: Իր յուրաքանչյուր սեկցիայից և ամեն մի առանձին կոմիտենիստից Կոմիտեներնը պահանջում է անպայման զիսցիպլինա: Սակայն, զրա հետ միասին, առանձին կոմիտեակցություններին տրվում է վորոշ ինքնուրույնություն Կոմիտեներնի ընդհանուր ցուցումները կիրառելիս, հարմարեցնելով այն տեղական պայմաններին, այն իմաստով, վոր **հիմնականում** Կոմիտեներնի ղեկավար հրահանգները կենսագործվեն մինչև վերջը:

Այն չափով, ինչ չափով յեղբայրական կոմիտենիստական կուսակցությունների մոտ կը կուտակվի պաշարի փորձ, ինչ չափով նրանց մոտ կը մշակվի ամուր ու կայուն լենինյան ղեկավարություն, նրանք պետք է ավելի ու ավելի քաշվեն Կոմիտեներնի ղեկավար աշխատանքի մեջ, իրենց փորձով լրացնելով ուսական բալլետիզմի խոշոր պատմական փորձը: Կուսակցության 14-րդ համագումարը մատնանշում է, վոր անհրաժեշտ է վարել «կոմիտենիստական ինտերնացիոնալի ղեկավարություն մեջ արտասահմանյան կոմիտեակցությունների ազդեցության աճման գիծ»:

Իր կառուցման մեջ, Կոմիտեներնը ոգտագործել է համ. ԿԿ (բ) կազմակերպչական փորձի և այլ կողմեր: Մեր կուսակցության որինակով առանձին կոմիտեակցություններ վերադասավորում են իրենց շարքերը՝ փարբիկա-գործարանային բջիջների հիմունքով:

Մինչև մոտ անցյալը կոմիտենիստական կուսակցությունները կառուցված են յեղել տերրիտորյալ ըսկրզրունքով, այսինքն կուսակցական կազմակերպությունները կառուցվել են ըստ կոմիտենիստների բնակավայրերի, այլ վոչ թե ըստ աշխատանքի վայրի: Այն ինչ, կուսակցություն միայն ֆարբիկա-գործարանային բջիջների հիմունքով կառուցվածքն է հնարավորություն տուղծում ավելի սերտ կապվելու բանվորական մասսային, ունկնդրելու նրա պահանջներին ուլալ ղեկավարելու նրան: Փարբիկա-գործարանային բջիջների հիմունքով կառուցվածքը մարտական բնույթ է պահանջում կուսակցությունից, վորը պետք է կարողանա անհրաժեշտ մոմենտին արագությունը կազմակերպելու բանվորական մասսաներին հեղափոխական մարտերի համար:

ԿՈՄԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ- Կոմիտեակցությունները
ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵԺ- պաշարը վարում են ամենա-
ՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ծանր պայմաններում: Բավա-
կան քանակով յերկիրներում՝ Ֆինլանդիայում, Լիտ-
վայում, Լատվայում, Լեհաստանում, Ռումինիայում, Բուլղարիայում, Վենգրիայում, Իտալիայում, Իսպանիայում, վորոնց բնակչությունը կազմում է 150 միլիոն մարդ, ահա արդեն մի քանի տարի յե ինչ իշխում է բուրժուազիայի սպիտակ տերրորը: Այլ յերկիրներից մի քանիսում (որինակ՝ Բուլղարիա, Լեհաստան, Վենգրիա) կոմիտենիստները հալտարարված են որինքից դուրս: Թված բոլոր յերկիրներում կոմիտենիստները զազտնի յեն գործում: Հետևյալ գիազրամը ցույց է տալիս, թե կապիտալի բանտերում վորքան հեղափոխականներ են հլուծվում:

Հեղափոխականների բաճակը կապիտալի բաճեցում

Իտալիայում	10,385
Բուլղարիայում	6,500
Լեհաստանում	5,000
Հարավ-Սլավիայում	3,000
Գերմանիայում	1,500
Ֆինլանդիայում	1,100
Եստոնիայում	1,000
Լատվիայում	750

Ընդամենը առ 1-ն հունվարի յեղել է 65,000 հոգի:

Բաց և այնտեղ, վորտեղ կոմունիստական կուսակցությունների գոյությունը կարծես թե թուլատրված է որենքով, չի վերջանում կոմունիստների դեմ տարվող դաժան հալածանքը:

Կոմունիստները դեմ պայքարում են բուրժուազիայի, ամբողջ ամենագորեղ ապարատը, նրա մամուլը, չեկեղեցին, դպրոցը: Կոմունիստների դեմ իրենց ամբողջ ուժով պայքարում են բուրժուազիայի գործակալներ—սոցիալ-դեմոկրատները: Կոմունիստական խոսքը՝ ուղղված բանվորներին, պայքարի կանչող կոմունիստական կոչը ստիպված է զրպարտության, կեղծիքի ու խափեյության պատի միջից, վորով շրջապատում են բանվոր դասակարգին՝ բուրժուազիան ու նրա մենչևիկյան ծառաները:

Կապիտալիստական չերկիրների կոմունիստական կուսակցությունների մեծամասնությունը—համեմատաբար դեռ չերիտասարդ են, չունին պայքարի անքան մեծ փորձ, ինչպես Հոյմ. Կի (բ): Նրանք ուսանում են պայքարում, ուսանում են իրենց հաղթանակների ու պարտությունների միջոցով:

ԿՈՄՄՆՏԵՐՆԻ ՈՒՅԵՐԸ Հետևյալ ղեկավարմը ցույց է տալիս մեզ անդամների քանակը Կոմիտեերնի ամենախոշոր սեկցիաներում:

1925 թվի վերջում, ԽՍՀՄ բացի, կոմկուսակցություններում վորեմե իսկական անգամ եմ յեղել

Անգլիայում	6,000
Զեխո-Սլավակիայում	100,000
Ֆրանսիայում	84,000
Գերմանիայում	150,000
Իտալիայում	25,000

Ինչպես տեսնում ենք, Կոմիտեերնը կապիտալիստական չերկիրներում համախմբում է առաջմ բանվոր դասակարգի ավանգարդին, բանվոր դասակարգի աննշան փոքրամասնությունը: Կոմիտեերնի գլխավոր անելիքն է, հատկապես ներկայումս, կապիտալիզմի մասնակի կայունացման պայմաններում,—պրոլետարական հեղափոխության համար նվաճել բանվոր դասակարգի մեծամասնությունը:

2. Կոմիսները բանվորական մասսաների համար մղած պայքարում

ՆԱԶԱԾԵՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ Հաճախ հարց է տրվում,— ՄԱՍՍԱՆԵՐԸ ԿՈՄՄՈՒ- ինչու հեղափոխությունն արև- ՆԻՋՄԻ ՀԱՄԱՐ մուտքում դեռ չի հաղթանակել: Դրա պատճառներից մեկը—մենչևիկների ուղղորտյունիստների (համաձայնողականների) ուժեղ ազդեցությունն է բանվոր դասակարգի վրա:

Ինչպես թվում է կարող եր գրավել բանվոր դասակարգի կողմից պատերազմի վերջանալու առաջին տարիներին, չերը կապիտալիզմը ապրում էր սուր ճրգ-

նաժառանգութեամբ Բալց Բանվոր դասակարգի մեծամասնութիւնն ալն ժամանակ գնում եր սոցիալ-դեմոկրատներէ յետեից, ալսինքն գտնվում եր բուժակարգի աղղեցութեան տակ: Կոմունիստական կուսակցութեանները, միայն վորոնք ի վիճակի չեն տանելու բանվոր դասակարգին՝ գրոհելու համար կապիտալին, ալն ժամանակ դեռ շատ փոքրաքանակ էին: Ժամանակավորապես խորհրդային իշխանութիւնը հաղթանակել է վեհերիւայում և Բալարիայում (Գերմանիայի շրջաններէ մեկը): Բալց շնորհիւ սոցիալ-դեմոկրատիայի դավաճանութեան հեղափոխական ալիքը չի կլանել կապիտալիստական հասարակարգը: Այդ ալիքի կրկնութեանը մենք տեսնում ենք 1923 թվին: Բալց ալս անգամ ես Գերմանիայի և Բուլղարիայի բանվոր դասակարգը պարտութեան կրեց:

Ընկ. Լենինը բազմիցս մատնանշել է, վոր տարրեր չերկիրներում կապիտալիզմը պարզանում է անհամաչափ, նույնանման չեն գրա համար և բանվոր դասակարգի պայքարի պայմանները տարրեր չերկիրներում: Նա հաղթանակել է Ռուսաստանում, բալց դեռ չի կարողացել հաղթանակել Արևմտյան Զեվրոպայի չերկիրներում: Այստեղ բուրժուազիայի գործակալները—մենշեկները—մինչև հիմա չել դեռ նշանակալից աղղեցութեան ունին բանվորական մասսաների վրա և բուրժուազիան հնալարութեան է ստացել հենց համաձայնողականների աղղեցութեամբ ձեռք բերելու վորոշ ժամանակավոր ամրապնդում:

Կապիտալիզմի ժամանակավոր ստաբիլիզացիայի պայմաններում կոմունիստների գլխավոր անելիքը հենց կայանում է նրանում, վոր պետք է նախապատրաստի բանվոր դասակարգի ուժերն սոսալիկա մճոական պայ-

քարին, դորահալաքման չենթարկի պրոլետարական հակաշական մասսաներին, համախմբի բանվորների մեծամասնութեանը կոմունիստական Ինտերնացիոնալի վրա շուրջը:

«Մենք ապրում ենք ուժերի կուտակման մի շրջան, վոր ունի հակաշական նշանակութեան հետագա հեղափոխական չելույթների համար» (Ստալին, 14-րդ համագումարին տրված գեկուցումից): Նախապատրաստել ուժերը հեղափոխութեան համար—նշանակում է ամրապնդել կոմունիստական կուսակցութեանները, նվաճել կոմունիզմի համար բանվոր դասակարգի մասսային:

Անհրաժեշտ է չիտ գրալի կոմունիզմի համար բանվորների ալն մասսաները, վորոնք դեռ գնում են սոցիալ-դեմոկրատների, ոպպորտունիստների չետեից, վորովհետեւ մենշեկիզմը—պրոլետարական հեղափոխութեան ամենավտանգավոր թշնամին է:

Իրենց աշխատանքի ամբողջ խնդիրը մենշեկները համարում են կապիտալիստական հասարակարգի ամրապնդումը: Նրանք վոչ միայն բանվորներին բուրժուազիայի դեմ պայքարի չեն հանում, ալլև մենշեկներին ամբողջ գործունեյութեան ուղղված է նրան, վոր պետք չիտ պահեն բանվոր դասակարգին կապիտալի դեմ պայքարելուց:

Դասակարգային պայքարի փոխարեն մենշեկները քարոզում են բանվորների դասակարգային համագործակցութեանը կապիտալիստների հետ: Քիչ թե շատ անկեղծ համաձայնողականներից մեկը—Մակդոնալդը դեմ է արտահայտվում նույնիսկ ամեն մի գործադուլային պայքարի:

Լենինը մեզ ուսանել է չերեք չժողովի սոցիալ-

դեմոկրատիայի դավաճանական վերնախավին սոցիալ-դեմոկրատական բանվորների մասսայի հետ: Սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդներն—դրանք գիտակից դավաճաններ են, իսկ մասսաները մոլորված են: Յև կոմ-մունիստների անելիքն է—այդ մասսաներին վերահամոզել, շիտակ դասակարգային գիտակցության պատվաստել:

ԲԱՆԱԳՈՐԱԿԱՆ ՄԻՆԱՆԱ-
ԿԱՆ ՃԱՆՈՒՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ
ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ՆԱԿԱՅԵԼՈՒ
ՄԻՋԵՑ Ե

Դրան է ծառայում բանվորական միասնական ճակատի տակտիկան (մարտավարութունը): Նա նպատակ ունի—անկու-

սակցական լեզվ սոցիալ դեմոկրատների լեզվից գնացող բանվորական մասսաներին գրավել կապիտալի գեմ մզվող պայքարի մեջ՝ բանվոր դասակարգի կենսական կարիքների պահպանման հիման վրա:

Կոմմունիստներն ասում են սոցիալ-դեմոկրատական կամ անկուսակցական բանվորին.—

Մենք քեզ հետ—դասակարգի յեղբայրակիցներ ենք: Մեզ բաժանում են լուրջ տարաձայնությունները այն հարցի մասին, թե բանվոր դասակարգն ինչպիսի միջոցներով պիտի պայքարի: Մենք գիտենք, վոր դու դեռ հավատում ես բուրժուական դեմոկրատիայի, բուրժուական «ազատություններ» փրկարարությունը: Դու առաջիմ դեռ հույս ունես, վոր բանվոր դասակարգը կարող է ամեն ինչին հասնել խաղաղ ճանապարհով, առանց հեղափոխության: Իսկ մենք կոմմունիստներս, գտնում ենք, վոր միայն հեղափոխության ճանապարհով պրոլետարիատը կը կարողանա տապալել բուրժուազիային, վոր սոցիալիզմի ճանապարհն անցնում է պրոլետարիատի ղեկավարությամբ վրայով:

Բայց, մեր բոլոր տարաձայնություններին հետ

միասին, մենք ընդհանուր հող ունենք կապիտալի դեմ պայքարելու համար: Մենք քեզ առաջարկում ենք—լեկ պայքարենք բանվոր դասակարգի կենսական ցահերի համար, ընդդեմ ամենորյա շահագործման, վոր կրում է մեր դասակարգի յուրաքանչյուր անդամը:

Յեկ, միասեղ պայքարենք կապիտալի կողմից աշխատավարձի և բանվորական որվա դեմ սկսած հարձակման դեմ:

Կոմմունիստներն առաջարկում են սոցիալ-դեմոկրատական բանվորին ստեղծել միասնական ճակատ պայքարելու համար նոր պատերազմների վտանգի դեմ և այլն:

Ասենք, թե մեզ հաջողվեց մի խումբ բանվորների քաշել աշխատավարձի իջեցման դեմ՝ կապիտալին ուղղված պայքարի մեջ: Ի հարկե, այդ չի նշանակում, թե բանվորներն արդեն գիտակից հեղափոխական կոմմունիստներ են դարձել, բայց վորոշակի քայլ այդ ուղղությամբ արված է: Վորովհետև, վորքան բանվորը շատ է մասնակից դառնում պայքարին, այնքան ավելի լավ է ավելի արագ է նա հասկանում, վոր կապիտալիստական հասարակությունը շրջանակներում բանվորը չպետք է հույս դնի նույնիսկ իր տնտեսական վիճակի լուրջ բարելավման վրա, վոր միայն բանվոր դասակարգի կողմից իշխանությունը գրավելը, նրա ղեկավարության սահմաններ վերջ կը դնի բանվոր դասակարգի կարիքներին:

Կոմիստներն Գործկոմի 6-րդ ընդլայնած պլենումը առաջարկում է կոմկուսակցություններին «միասնալ սոցիալ-դեմոկրատական բանվորների հետ այս կամ այն պրակտիկ գործողությունների համար, նույնիսկ ամենամինիմալ լոգունգների հիման վրա, հայտ-

ծաղուկ և կազմակերպվել արդյունքը — աշխատավարձը վորոշ հափով բարձրացել է:

Կապիտալին ուղղած պայքարում այդ մասնակի հաղթանակի առթիվ կոմունիստը կասի. — մենք հաջողություն ենք ձեռք բերել, վորովհետև դուրս յեկանք միասնական ուժերով, բայց հիշեցեք, բանվորներ, թե ինչքան աննշան է այդ հաջողությունը, թե ինչքան նա անկայուն է: Վորովհետև, քանի իշխանությունը բուրժուազիայի ձեռքում է, միշտ գոյություն ունի ձեռք վիճակի ամենածանր վատթարացման վտանգը: Միայն հեղափոխությունը, միայն բանվոր դասակարգի կողմից իշխանությունը գրավելն իրոք արմատական կերպով կը բարելավի բանվորների վիճակը:

Միասնական ճակատի տակտիկայի հաջողությունները հափվում են նրանով, թե կոմունիստներին իրոք վորքանով է հաջողվել մոտենալ մասսաներին և մոտեցնել նրանց այն հիմնական մտքի չլուրացման, թե միայն պրոլետարական հեղափոխությունն ու պրոլետարիատի դեկտատուրան կը կարողանան ապահովել բանվոր դասակարգի դրության խոկական բարելավումը:

ՄԻԱՄԱՍԻՆԻՍՏԻՆ ԲՄՆ- Հաճախ թերթերում մենք ՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԻ կարդում ենք, թե այս կամ այն չերկրի կոմունիստները դիմում են, ասենք թե, սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական կոմիտեյին առաջարկելով միատեղ պայքար մղելու ութ ժամյա բանվորական որվա համար, պատերազմի վտանգի դեմ և այլն: Առաջին հայացքից այդ ոտարոտի յե թվում: Չէ՞ վոր սոցիալ-դեմոկրատների վերնախավը — դավաճանական է, չէ՞ վոր դրանք — բանվոր դասակարգի գիտակից դավաճաններն են: Միթե՞ նը-

րանք պատրաստ են վորեն պայքար մղելու կապիտալի դեմ:

Իայց պարզ է, վոր նման դեպքերում կոմունիստները դիմում են վոչ թե սոցիալ-դեմոկրատական առաջնորդներին, այլ նրանց գլխի վրայով — սոցիալ-դեմոկրատական բանվորների մասսային: Բանակցություններ վարել միայն սոցիալ-դեմոկրատական վերնախավի հետ, ամբողջ աշխատանքը չփոխադրելով բանվորական վարի խավերը, նշանակում է — մոռանալ միասնական ճակատի տակտիկայի վորջ ելությունը: Այդպիսի դեպքեր յերբեմն իրոք նկատվել են և Կոմիտեներն միասնական ճակատի տակտիկայի այդ կարգի ալլանդակությունների դեմ վճռական պայքար է մղում:

Յեթե կոմունիստներին իրոք անհրաժեշտ է դիմել սոցիալ-դեմոկրատական առաջնորդներին, ապա միաժամանակ պետք է լայն բացատրական աշխատանք կատարել շարքային սոցիալ-դեմոկրատական բանվորների մեջ:

Անհրաժեշտ է, վորպեսզի սոցիալ-դեմոկրատներին արված կոմունիստների առաջադրությունների բովանդակության մասին գիտենա բանվորական վորջ մասսան: Անհրաժեշտ է, վորպեսզի բանվորական մասսան տեղյակ մնա բանակցությունների ընթացքին: Գլխավորն է, — կարողանալ կազմակերպել սոցիալ-դեմոկրատական բանվորների մասսայի ճնշումն իրենց վերնախավի վրա, իսկ յեթե վերնախավը հրաժարվում է ամեն տեսակի միատեղ պայքարից — պարզաբանել բանվորներին, թե նրանց առաջնորդները վորքան խորն են թաղվել համաձայնողական տիղմի մեջ:

Ինչպես ՊԵՏԲ և ԿԻՐԱ- Միասնական ճակատի տակ-
ՌԵԼ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԾԱ- տիկայի ճիշտ կենսագործման ու-
ԿԱՏԻ ՏԱԿՏԻԿԱՆ րինակ կարող է ծառայել գեր-
մանական կոմկուսակցության՝ իշխանական տների
փոխհատուցման հարցի առթիվ մղած կամպանիան:

Իշխանության գլուխ կանգնած գերմանական
բուրժուազիան պատրաստվում է վերադարձնել 1918
թվին տապալված իշխանական տներին (նախկին կալսր,
թագավորներ, իշխաններ, վոր՝ Գերմանիայում շատ
կար) նրանց ամբողջ՝ ժողովրդից թալանած, կալքը:

Ներկա պայմաններում, յերբ կան չեքեք և կես
միլիոն գործազուրկներ, վորոնք ազգատիկ թռչակ են
ստանում, թագավորներն ու իշխանները պետք է տի-
րանան մի կայքի, վոր գնահատվում է չերկու և կես
միլիարդ մարկ:

Կոմունիստներն առաջարկել են սոցիալ-դեմո-
կրատական և բանվորական ալլ կազմակերպություն-
ներին՝ միատեղ պայքար մղել իշխանական կալքի
բռնագրավման ոգտին և ձգտել, վորպեսզի դրա հա-
մար համաժողովրդական քվեարկություն կատարվի:
«Վոչ մի գրոշ իշխաններին» — ալլ եր կոմունիստնե-
րի լոզունգը: Ինչպես տեսնում ենք մասնակի լոզունգ
է, վորի կենսագործումը դեռ ամենևին չի նշանակում
կապիտալիստական հասարակարգի հիմքերի կործա-
նում:

Սոցիալ-դեմոկրատիայի վերնախավը, ի հարկե,
չհամաձայնվեց կոմունիստների առաջարկին, վորով-
հետև բուրժուազիայի դեմ սոցիալ-դեմոկրատները վոչ
մի լուրջ պայքար չեն ուղում: Բայց կոմունիստները
բանվորական մայրաքաղաքի մեջ յեռանդուն պայքար են
մղում: «Իշխաններին վոչ մի գրոշ» լոզունգը միան-

գամից լայն հանրամատչելիություն ստացավ, վորով-
հետև նա հասկանալի է և հեշտությամբ յուրացվում
է նույնիսկ ամենահետամնաց բանվորի կողմից: Կոմուն-
իստներն իրենց ազիտացիայի ընթացքում ամենևին
չեչին սահմանափակվում «վոչ մի գրոշ իշխաններին»
լոզունգի պարզաբանմամբ: Նրանք ասում եչին բան-
վորներին՝ բանվորության միասնական ճակատի ա-
հրաժեշտության մասին, բուրժուական դեմոկրատիայի
նյության մասին, վորն աշխատավորների հաշվին մի-
լիարդներ է շարտում իշխաններին ու թագավոր-
ներին: Կոմունիստները մերկացնում եչին սոցիալ-դե-
մոկրատների քաղաքականությունը, վոր նա (սոց-
դեմոկրատիան) մի ավելորդ անգամ ապացուցեց, թե
ինքն անկարող է և չի ցանկանում բուրժուազիայի
դեմ վորեև պայքար մղել:

Իր բանվոր անդամների մասսայի ճնշման տակ,
սոցիալ-դեմոկրատական առաջնորդները, վերջապես,
համամաձայնվեցին կոմունիստների առաջարկին: Սո-
ցիալ-դեմոկրատների հետ համաձայնության գալով,
կոմունիստները, այնուամենայնիվ կոմունիստները շա-
րունակեցին պնդել իրենց կոմունիստական հայացք-
ները, — կոմունիստները վոչ մի բույս չդադարեցրին
սոցիալ-դեմոկրատիայի անվճռականությունը մերկաց-
նող իրենց աշխատանքը:

Համաժողովրդական քվեարկությունը կիրառվեց,
բայց նա, անհրաժեշտ 20 միլիոնի փոխարեն ժողովեց
միայն 15 միլիոն ձայն: Դա սոցիալ-դեմոկրատների
աքռոտածի և հատկապես — բուրժուազիայի տերրորի
հետևանքն է: Ամեն քայլափոխում բուրժուազիան
բանվորներին սպառնում եր արտաքսել՝ քվեարկու-
թյան մասնակցելու դեպքում: Գլուխկան վայրերում

333-9515967

յեղել են նույնիսկ ծեծի դեպքեր: Քվեարկության արդյունքները կոմմունիստների կողմից կրկին ողտազորվել են սոցիալ-դեմոկրատիայի ելուծյան և բուրժուական պետության «ազատությունները» արժեքի բացատրական աշխատանքի համար:

Այդպիսով, չեղակետ ընդունելով մասնակի լուրջագր—իշխանական ունեցվածքների բռնազրավումը,—կոմմունիստներն, այդ լուրջագրի շուրջը բանվորական մասսաներում ծավալել են լայն ազդեցություն, դրանելով նրանց առաջ հեղափոխության ընդհանուր արմատական խնդիրները:

Կոմիտեների Գործկոմի (1921 թվի վերջում) թեզիսներում միասնական ճակատի տակտիկայի մասին, մենք կարդում ենք.—«այն ընդհանուր կացությունը, վորի մեջ գտնվում է բանվորական շարժումն այժմ, յուրաքանչյուր լուրջ մասսայական չեղույթ, վոր սկսված լինի նույնիսկ միայն մասնակի լուրջագրերից, անխուսափելիորեն պետք է հերթի դնի հեղափոխության ավելի ընդհանուր և արմատական խնդիրները»: Այդ լիովին ճիշտ է ֆուկում և ներկայիս համար:

ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՊԱՅԿԱՐԸ Իսերորդ գրուցում մենք ԱՋ ՅԵՎ «ԾԱՅՐԱՆՆԵՐ Կարգացինք, վոր մեր կուսակցության թեֆոնների ԴԵՄ ցությունը կոփվել է մանր բուրժուական թեքումների դեմ մղած պայքարում: Այդ պայքարը ստիպված է վարել և ամբողջ կոմմունիստական Իստերնացիոնալը: Այլ և «ծայրայեղ ձախ» («ուլտրա-ձախ») թեքումների դեմ մղած պայքարում ոտարյերկրյա կոմկուսակցությունները կուտ են լենինյան ճիշտ գիծ: Կապիտալիզմի վորոշ ուժեղացումը, բանվորական մասսաները գրավիլու համար «ծանր, դանդաղ, սև, առորյա» (Լենին) աշխատանքին անցնելը—

այդամենը կոմմունիստական կուսակցությունների ավելի կայուն տարրերի մեջ ստեղծում է լիկվիդատորական թերահավատություն, հուսախափություն: Վոչ-պրոլետարական տարրերը, վոր միացել են կոմմունիզմին այն ժամանակ, յերբ կարելի չէր սպասել պրոլետարական հեղափոխության արագ հաղթանակ, այժմ հեռանում են կոմմունիզմից, հեղափոխությունից: Լինում է և այնպես, վոր հուսախափության ընդգրկվում են բավականաչափ կոփվածություն ու կայունություն չունեցող հեղափոխական բանվորները: Չպետք է մոռանալ և այն, վոր կոմմունիստական Իստերնացիոնալն իր շարքերում ունի ամբողջ խմբեր և առանձին ընկերներ, վորոնք առաջ յեղել են մենշևիկյան չերկրորդ Իստերնացիոնալում: Նրանք դեռ վերջնականապես չեն բաժանվել այն հայացքներից, վոր ընդունել են նրանք չերկրորդ Իստերնացիոնալում յեղած ժամանակ և չենթարկվում են մանր-բուրժուական ազդեցություններին: Այս ամենը նպաստում են մանր-բուրժուական թեքումների հանդես գալուն:

Այլ և ծայրահեղ-ձախ թեքումները հատկապես ցայտուն կերպով հանդես են գալիս միասնական ճակատի տակտիկայի կենսագործման ժամանակ:

Այլ թեֆումը կայանում է նրանում, վոր ձգտում է քի, քե ցառ ամուր միություն սահմանել համաձայնողականների հետ. յերբ վերջիններս, բանվորական մասսաների ճեման ցակ, ստիպված են ընդունելու կոմկուսակցության այս կամ այն առաջադեպ:

Վերևում մենք կարդացինք, վոր միասնական ճակատի տակտիկան միայն այն դեպքում հաջող կը լինի, յեթե կոմմունիստները միատեղ գործելու ամեն տեսակի համաձայնության դեպքում միշտ ամուր է վճար

պես կը պաշտպանեն իրենց հայացքները, միասնական ճակատի տակտիկան կոմմունիստները պետք է ոգտագործեն համաձայնողականներին մերկացնելու համար, բանվորական մասսաները նրանցից պոկելու համար: Իսկ աջ թեքումը նշանակում է, թե կոմմունիստները դադարում են պայքարել ընդդեմ սոցիալ-դեմոկրատների, մատնանշել նրանց սխալներն ու տատանումները, վոր կոմմունիստները հրաժարվում են իրենց անհաշտ-հեղափոխական լողուններին:

Աջ թեքումների հիմքում ընկած է լիկվիդատորական թերահավատությունը դեպի պայքարի հեղափոխական մեթոդները, համաձայնողականներին անձնատուր լինելը:

Աջ թեքման որինակ կարող է ծառայել Ֆրանսիական կոմմունիստական կուսակցության աջ թևի տակտիկան: Աջ թևի ընկերները պաշտպանում են այն տեսակետները, թե միասնական ճակատը պետք է ստեղծել միայն վերից՝ համաձայնողական առաջնորդների հետ: Աջ թևը պահանջում էր յետ վերցնել կոմմունիստական կուսակցության լողունը՝ Ֆրանսիական իմպերիալիզմի զորքերը Մարբոկո գաղութից դուրս հանելու (եվտիուացիայի) առթիվ, վորովհետև, իբր թե, ռիֆերը—վայրենիներ են, իսկ Ֆրանսիացիները—կուլտուրական մարդիկ, ուստի է ռիֆերը չպետք է դուրս գան Ֆրանսիական իմպերիալիզմի հպատակությունից: Աջերը, նշանակում է, հրաժարվել են իմպերիալիզմի դեմ մղած ճնշված գաղութների պայքարին աջակցելուց, այդ հարցում հանգել են բուրժուազիայի տեսակետին:

Ծայրահեղ-ձախ բեկումների ելուքները կայացում է ճրագում, վոր ճրագն չեն հասկանում մաս-

սագների կապվելու անհրաժեշտությունը չեմ կարողությունը չունեն կապվել մասսաներին: Ծայրահեղ-ձախերը դեմ են դուրս գալիս միասնական ճակատի տակտիկային.—կոմմունիստներն, ասում են նրանք, յերբեք չպետք է առաջադրեն մասնակի լողուններ, այլ միշտ պետք է մոտենան սոցիալ-դեմոկրատական բանվորին կոմմունիզմի վերջնական լողուններին աջակցելու պահանջով:

Ծայրահեղ-ձախերը փորձում են ջլատել կուսակցության աշխատանքը, վոր կատարվում է սոցիալ-դեմոկրատական բանվորների հետ կապ հաստատելու, նրանց վերադաստիարակելու ուղղությամբ, և նրանով իսկ աջակցում են համաձայնողականներին: Իրենց վրնասակար տակտիկան նրանք ծածկում են առաջին հայացքից «գերհեղափոխական» խոսքերով: Իսկ իրականում ծայրահեղ-ձախ թեքումը նույնպես ամբողջական լիկվիդատորություն է՝ հեղափոխության խնդիրների նկատմամբ: Ձախերը վախենում են, թե մասսաների հետ կապվելու հետևանքով կուսակցությունը կը կորցնի իր կոմմունիստական դեմքը, թե կուսակցությունը կը լուծվի մասսաների մեջ: Ծայրահեղ-ձախերը չեն հավատում բանվոր դասակարգի ավանգարդի ուժերին, նրա ընդունակությանը, վոր նա կարող է իր լիակց տանել պրոլետարիատի մասսաներին:

Կոմմունիստն, ասում է ընկ. Լենինը,—«պետք է անպատճառ աշխատի այնտեղ, վորտեղ մասսա կա: Պետք է կարողանալ ամեն մի զոհողություն անել, հաղթահարել հսկայական խոչնդոտներ, վորպեսզի սխտեմատիկորեն, համառությամբ, հաստատակամությամբ ու համբերատարությամբ պրոպագանդա ու ագիտացիա մղի հենց ամենածայրահեղ ռեակցիոն այն հիմնար-

կուլթուրներում, ընկերութուններում, միություններում, վերստի միայն կա պրոլետարական կամ կիսապրոլետարական մասսա»:

Ծայրահեղ-ձախերն այդ չեն հասկանում:

Կոմիստերնը միատեսակ վճռականությամբ պայքարում ե չերկու թեքումների դեմ, վորովհետև միայն նրանց հետ պայքար մղելով ե սահմանվում մասսաներին զրավելու ե ղեկավարելու ճիշտ տակտիկան:

Միաժամանակ Կոմիստերնը պետք ե հաշվի առնի ծայրահեղ-ձախ թեքումների մի առանձնահատկությունը՝ վոր նրանք, բավականին մեծ չափով, քան աջերը, պաշտպանվում են «հեղափոխական» Ֆրազով: Հակաբանվորական գործը նրանք ներկայացնում են վորպես 100 տոկոսյան կոմմունիզմ: Իսկ թե յերբեմն ինչ ե թաղնվում այդ հեղափոխական Ֆրազի յետևում, մենք տեսնում ենք Գերմանիայի ծայրահեղ-ձախերի տարբեր խմբակների որինակներում, յերը նրանք հասնում են նրան, վոր ամբողջ բուրժուազիայի ե համաձայնողականների հետ միասին բաց թշնամանք են սերմանում ղեպի ԽՍՀՄ:

ՊԱՅԳԱՐ ՀԱՄԱՇԽՈՐ- Բանվորական մասսաներին ՀԱՅԻՆ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ չի կարելի նվաճել մինչև կոմմունիստները չը տիրեն արհմիություններին: Արհմիություններում ընդգրկված են բանվոր գաղակարգի հսկայական մասսաները: Շարքային բանվորը հավատում ե արհեստակցական միություններին վորպես իր շահերի պաշտպանման հուսալի զինք: Հենց արհմիությունների միջոցով ե, վոր կոմունիստները կարող են մոտենալ բանվորական մասսաներին: Քանի թույլ ե կոմմունիստների ազդեցությունն արհեստակցական միություններում, խոսք տն-

գամ լինել չի կարող կոմմունիզմի համար բանվոր դասակարգի մեծամասնությունը նվաճելու մասին: «Միասնական ճակատի կիրառման ծանրության կենտրոնը նեքիչացումս հանդիսանում ե արհեստակցական շարժումը» — ասում ե Կոմիստերնի Գործկոմի պլենումը: Արհմիություններում դեռ չափազանց ուժեղ ե համաձայնողականների ազդեցությունը:

Արհշարժման բնագավառում համաձայնողականները կիրառում են իրենց սովորական՝ բուրժուազիայի հետ գործակցելու քաղաքականությունը: Նրանք չեն ուզում պայքարել կապիտալի դեմ ե պայքարին միշտ գերադասում են նեխված կոմպրոմիսներ ե համաձայնություններ՝ բանվորական լայն մասսաների շահերի հաշվին:

Շնորհիվ համաձայնողականների ազդեցության արհշարժումը չափազանց ցրված, բաժան-բաժան վիճակում ե: Համաձայնողականները շահագրգռված չեն բանվորների ուժի հավաքման, վորովհետև նրանք պայքար չեն ուղղում: Միայն որինակ, Անգլիայում դասական արհմիությունների թիվը հասնում ե հազարի: Միևնույն արհեստի բանվորները տարբեր միությունների մեջ են լինում: Իրականում յուրաքանչյուր ցերկրի արհմիութենական առաջնորդները գտնվում են իրենց բուրժուազիայի ազդեցության տակ ե հրաժարվում են վորեք իրական միջազգային պրոլետարական ոգնություն հասցնել պայքարող բանվորներին:

Ամստերդամյան արհշարժման դավաճանությունն վառ ոգինակ կարող ե ծառայել Անգլիայի հանքագործների գործադուլին ցույց տված ամստերդամյան արհմիությունների «ոգնությունը»: Անգլիական հանքագործներն անգլիական արհմիությունների (տրեդ-յունիոն-

ների) գլխավոր խորհրդի միջոցով մտնում են Ամստերդամի ինտերնացիոնալի մեջ: Միաժամանակ նրանք մտնում են և հանքագործների միջազգային ֆեդերացիայի մեջ, վորտեղ նրանք հանդիսանում են ամենից ավելի խոշոր կազմակերպությունը:

Յեվ ինչ ենք մենք տեսնում:

Աննշան ոգնություն անգամ, վոչ Ամստերդամի ինտերնացիոնալը, վոչ հանքագործների միջազգային ֆեդերացիան անգլիական հանքագործներին ցույց չը տվին: Ամստերդամյանները հրաժարվեցին արգելք հանդիսանալ ուրիշ յերկիրներից Անգլիա մուծվող շտրեկ-բրեխերական ածխին: Ամստերդամական արհմիությունները հրաժարվեցին դրամական հատկացումներ կատարել գործադուլավոր հանքագործների ոգտին: Գերմանական արհմիությունների միությունը վորոշել է նույնիսկ չհանել հանքագործների գործադուլից.— գործադուլն ըսկըսվելուց 4 ամիս անց, աչն մոմենտին, յերբ հանքագործների կարիքը ծայր աստիճանի յեր հասել, գերմանական արհմիությունների միությունը անգլիական տրեդ-յունիոնների գլխավոր խորհրդին 100 հազար ուոլլու վարկ է հատկացրել վաշխառուական հիմունքներով—տարեկան չորս և կես տոկոսի հաշվով*):

Միայն հեղափոխական արհմիություններն են իրական ոգնություն ցույց տվել անգլիական հանքագործներին: Միայն խորհրդային միությունները (մինչեվ սեպտեմբերի 4-ը) ուղարկել են հանքագործներին 8 միլիոն ուոլլի:

Յուրաքանչյուր որ, բանվորական շարժման ընթացքում տեղի ունեցող յուրաքանչյուր յերեվույթ

*) Այդ նշանակում է, թե մի տարուց հետո պետք է վերադարձվի մեջ թե 100 հազար, այլ 104 հազար 500 ուոլլի:

բանվորական մասսային տալիս է նոր ապացույցներ, վոր համաձայնողականների ներկայիս ղեկավարության ղեպքում, արհեստակցական շարժման ներկայիս ցրվածության ղեպքում, բանվորների ամենակենսական կարիքներն անհրաժեշտ պաշտպանություն չեն գտնում: Ահում է միասնակություն սահմանալու հզոր ձգտումը: Կոմունիստներն առաջադրում են արհարժման միասնության լոզունգը: Կոմունիստներն ուզում են ստեղծել արհմիությունների այնպիսի միասնական և ժարտական ինտերնացիոնալ, վորն իրոք կարող կը լինեք ղեկավարելու բանվորների դասակարգային մարտերը հանդեպ կապիտալի հարձակման:

«Պայքար յուրաքանչյուր առանձին յերկրում արհմիությունների միասնականության վերականգնման համար, պայքար դասակարգային արհմիությունների միասնական ինտերնացիոնալ ստեղծելու համար—ահա գլխավոր լծակը միասնական ճակատի տակտիկայի կիրառման գործում» (Կոմիստերնի Գործկոմի 6-րդ պլենումի բանաձևվից):

Արհմիությունների միասնական ինտերնացիոնալ ստեղծելը պետք է կոմունիստներին բանվորների լայն մասսաների մոտ անցնելու հնարավորություն տա:

Արհմիությունների միասնական ինտերնացիոնալ ստեղծելու պայմանը հանդիսանում է այն, վոր կոմունիստներին իրավունք է վերապահվում ազատ, անխնա քննադատել համաձայնողականներին.— «արհմիություններն,—ասում է ընկ. Քուխարինը,—մենք պետք է նվաճենք, վորպես հեղափոխականներ, հեղափոխության նպատակի համար, իսկ վորպեսզի արհմիությունները նվաճվեն այդ նպատակի համար...վորպես անհրաժեշտ նախադրյալ, հանդիսանում է աչն, վոր պետք

և արհմիություններից դուրս քշել ուղարկողներին տական առաջնորդներին, այսինքն նրանց իրենց դիրքերից հանել, այսինքն անխնայ, դաժան՝ իսկական ջախջախիչ գաղափարական քննադատություն չեն թարկել նրանց»:

Համաձայնողականներն արհշարժման միասնություն չեն ուղղում: Համաձայնողականներն ամեն կերպ խուսափում են կապիտալի դեմ իսկական պայքար մղելուց: Այնքան ավելի համառ ու հաստատակամ պետք լինի արհշարժման միասնականության յուրաքանչյուր մոմենտներին տարած աշխատանքը բանվորական մասսաներում:

Թե ինչքան մեծ է բանվորների ձգտումը դեպի արհշարժման միասնականությունը, ցույց է տալիս դեռ Անգլիայի ընդհանուր գործադուլից շատ առաջ (1925 թ.) ստեղծված անգլո-խորհրդային կոմիտեն, վոր կազմված է արհմիությունների համառուսական կենտրոնական խորհրդի (ВЦСПС) և անգլիական արհմիությունների զխավոր խորհրդի ներկայացուցիչներից:

Այդ կոմիտեյի ստեղծման ժամանակ, վորպես նրա նպատակներ հայտարարվել են.—անգլիական և ռուսական արհշարժման միատեղ պայքարն ընդդեմ կապիտալի հարձակման, ընդդեմ նոր պատերազմների վտանգի, հոգուտ միջազգային արհշարժման միասնականություն:

Անգլիայի կողմից այդ կոմիտեյում նստած են համաձայնողականները՝ տրեդ-յունիոնների զխավոր խորհրդից: Միթե մենք կարող ենք հուսալ, թե այդ ակֆորմիստներ իրոք ցանկանում են պայքարել իրենց դրած նպատակների համար: Ի հարկե, վնչ: Մեզ համար այդ կոմիտեն մի գենք է հանդիսանում անգլիական բանվորական մասսային կապվելու համար:

Անգլիայի բանվորական մասսաները, անգլիական կապիտալիզմի զարգացող տնտեսական անկման ազդեցություն տակ, անընդհատ ձախսում են: Անգլիական բանվորները ձգտում են արհշարժման միասնականության, ռուսական բանվորների հետ մարտական միություն կազմելուն: Անգլիական բանվորական մասսաների ճնշումն է, վոր ստիպել է համաձայնողականներին անգլո-ռուսական կոմիտե ստեղծել:

Այդ ճնշման նպատակ է անգլիական արհմիությունների հեղափոխական փոքրամասնության շարժումը, վոր բոլոր կարևորագույն խնդիրներում գնում է կոմմունիստների յետևից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱ-	Նախորդ զրույցում մենք ար-
ԴՈՒՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ	դեն մատնանշել ենք, Անգլիայի
ՅԵՂ ՊԱՅԲԱՐ ՀՈԳՈՒՏ	ընդհանուր գործադուլի նշանա-
ԱՐՀՇԱՐԺԱՆ ՄԻԱՍ	կությունը հեղափոխական բան-
ՆՈՒԹՅԱՆ	վորական շարժան զարգացման
	համար:

Ընդհանուր գործադուլը ցույց տվեց, թե ինչքան ուժեղ է սրվել հակասությունները բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև, վոր դրությունը հրում է բանվորական մասսաներին դեպի պայքարի հեղափոխական ուղիները: Ընդհանուր գործադուլը պետք է համոզեք նույնիսկ հետամնաց պրոլետարիատին, վոր «համաժողովրդական» բուրժուական պետությունն՝ իր բոլոր կարծեցյալ «ազատություններով» դասակարգային ճնշման գենք է հանդիսանում: Ընդհանուր գործադուլը մոտեցրել էր անգլիական—և վոչ միայն անգլիական—բանվորների մասսային այն հասկացողության, թե անհրաժեշտ է տապալել բուրժուազիային և հաստատել պրոլետարիատի դիկտատուրա:

Ընդհանուր գործադուլը ստեղծել է չափազանց բարենպաստ պայմաններ անգլիական առեմիությունները (սեբեդուկիոնները) նվաճելու առթիվ կոմունիստների հարվող աշխատանքի համար:

«Գործադուլի ընթացքն ու յեկըր, —ասում է ընկ. Ստալինը, —չեն կարող չհամոզել Անգլիայի բանվորական մասսաներին հին դեկավարների անպետքություն մեջ, հին առաջնորդների անպետքություն մեջ...»:

Ընդհանուր գործադուլի ծանր ընթացքին, յերբ տարբեր կուսակցությունների ծրագրերը ստուգվում էին գործով, անգլիական բանվորները չէին կարող չհամոզվել, վոր միակ կուսակցությունը, վոր կարող է բանվոր դասակարգի շահերը պաշտպանել մինչև վերջը, համարձակ ու վճռապես, հանդիսանում է կոմունիստական կուսակցությունը»:

Յեվ իրոր:

Ընդհանուր գործադուլը հայտնաբերեց Անգլիայի բանվորական մասսաների չտեսնված կալունությունն ու դիմացկունությունը և նրանց կապիտալի գեմ պաշարելու վճռականությունը: Թեպետ կապիտալի հարձակումն անմիջականորեն ուղղված է չեղել միայն հանքագործների դեմ, ինքնագոհ կերպով պաշարի չեն բարձրացել և չերկաթուղայիները, և մետաղագործները, և ուրիշները: Գործադուլին միացել են և արհմիություններում չկազմակերպված բանվորները: Չնայած գործադուլով ամեն տեսակի սպառնալիքներին, կառավարությունը չհաջողվեց բանվորներից շարեկերթիները ժողովել, չնայած, վոր գոյություն ունեն միլիոնից ավելի գործադուլություն: Սակայն վճռական մարտի պատրաստ բանվորական բանակը գլխավորել է վախկոտ, դավաճան շտաբը — տրեյդու-

նիոնների գլխավոր խորհուրդը: Գլխավոր խորհրդի համաձայնողականներից թե աջերը և թե աջապես կոչված «ձախերը», պաշարել, իհարկե, չեն կամեցել: Նրանք վճռել են ընդհանուր գործադուլ հայտարարել միայն բանվորական մասսաների ճնշման և նրանց մարտական տրամադրության տակ: Բայց գործադուլի հենց սկզբից գլխավոր խորհրդի լիդերները (պարագլուխները) միայն սպասում էին հարմար մոմենտի՝ դավաճանություն համար: Նրանք պաշարն ընդհատեցին այն մոմենտին, յերբ բանվորների մարտական տրամադրությունն աճել էր, կալունությունն ու դիմացկունությունն անկասկած հաղթանակի կհասցներ: Գլխավոր խորհրդի լիդերները հանձնվեցին բուրժուազիայի սիրուն, նրանք վախեցան կապիտալիստների դասակարգի դեմ պաշարելուց, այն դասակարգի, վորի սպասավորներն են հանդիսանում իրենք:

Արհմիությունների պարագլուխների կողմից ընդհանուր գործադուլը լուծելուց հետո, հեղափոխականորեն տրամադրված բանվորների շրջանում սկսվեցին առաջնալ արհմիություններից դուրս գալու տրամադրություններ: Ինչպես ասում է ընկ. Բուխարինը, բանվորների մի վորոշ մասն սկսել է մտածել, որինակի համար, այսպես. — «փչացրին մեր գործը մեր արհմիությունների առաջնորդները, ապա և սատանան նրանց հետ, արհմիությունները — նեխած կազմակերպություն է, յեկեք հեռանաք նրանից և կազմակերպենք նորը»: Պարզ է, վոր նման դատողությունները հիմքից սխալ են, վոր արհմիություններից դուրս գալը կհանդիսանար ամենախոշոր սխալը:

Դուրս գալ արհմիություններից, կնշանակել հրաժարվել նրանց նվաճելուց, իսկ ինչպես մենք կար-

դացիներ վերևում, առանց արհմիությունները նվաճելու խոսք անգամ լինել չի կարող այն մասին, վոր կոմմունիստներն իրենց յետևից կտանեն բանվոր դասակարգի մեծամասնության: Համաձայնողականները հնո քաջասում են թե յերբ արհմիություններում նրանք կազատվին կոմմունիստներից, վորոնք խանգարում են անել նրանց իրենց դավաճանական գործը: Համաձայնողականները վաղուց կարտաքսելին կոմմունիստներին արհմիություններից, յեթե նրանք չվախենալին բանվորական մասսաների հուզմունքից: Արհմիություններից կոմմունիստների հեռացալը չափազանց կուժեղացնի համաձայնողականներին:

Կոմմունիստները չպիտի հեռանան այն արհմիությունից, վորին ղեկավարում են համաձայնողականները: Կոմմունիստը չպետք է ասի, թե «յես չեմ կարող մնալ այն արհմիության միջ, վորի գլուխ են կանգնած զաւճանները»: Ընդհակառակը, պետք է մնալ արհմիություններում, ամբառալ այնքող, լայնացնել իր ազդեցությունը, վորպեսզի բանվորական մասսաների առաջ անելոն մեկացնի համաձայնողականների գաղափարությունը, վորպեսզի «սխեսեմաթիկորեն, համառությամբ, հաստատականությամբ ու համբերությամբ ազիտացիա յեզ պրոպագանդա մղի» (Լենին) յեզ իր յեսեպից թանի բանվորական մասսային:

Ծայրահեղ ձախերը շարունակ առաջ են բերել արհմիությունից հեռանալու լողունգը: Կոմիստները վճռական պայքար են մղում նման ամեն փաստակար սխալների դեմ: Արհմիություններում հաժաո աշխատելու վիճը, «մեր կողմից պետք է պաշտպանվի ամբողջ վճռականությամբ, ամբողջ պարզությամբ և ամբողջ

հշտությամբ» (Բուխարին): Անգլիական բանվորական մասսաների հուսախաբությունը դեպի արհմիության համաձայնողական առաջնորդները պետք է ողորդորդվի անգլիական կոմմունիստների կողմից արհմիություններում կոմմունիստական ազդեցությունն ուժեղացնելու նպատակով:

Արհմիություններից դուրս գալու հարցի հետ սերտորեն կապված է նույնպես և անգլո-ռուսական կոմիտեյից ռուսական արհմիությունների ներկայացուցիչների դուրս գալը: Այդ եր պահանջում մեր կուսակցության ուղղորդիկան: Մենք չենք կարող մի կոմիտեյում նստել անգլիական գլխավոր խորհրդի ներկայացուցիչների հետ, վորոնք մատնեցին ընդհանուր գործադուլը, պիտք է հեռանալ. — սրան են հանգում ուղղորդիկայի դատողությունները:

Դիվար չեն համոզվել, վոր տվյալ դեպքում ուղղորդիկան դուրս է գալիս միասնական ճակատի տակախկալի դեմ, արհմիություններում աշխատելու լենինյան գծի դեմ: Անգլո-ռուսական կոմիտեյին մենք յերբեք չենք դիտել վորպես առաջնորդների բլոկ, վորպես միություն, կնքված անգլիական արհմիության լիդերների հետ: Մենք միշտ շատ լավ գիտեցինք և գիտենք, վոր գործ ունենք համաձայնողականների հետ, վորոնք յեկել են անգլո-ռուսական կոմիտե միայն բանվորական մասսաների ճնշման տակ: Մեզ համար անգլո-ռուսական կոմիտե հանդիսանում է սի գեմե անգլիական բանվորական մասսաների հետ կապվելու համար: Համաձայնողական առաջնորդների գլխի վրայով, մենք, անգլո-ռուսական կոմիտեյի ռզմությամբ պարզաբանում ենք անգլիական բանվորական մասսային մեր պրոլետարական գաղափար-

գայիճ օեսակեօք միջագգայիճ բանվորական շարժման խնդիրների նկատմամբ:

Անգլո-ուսական կոմիտեյի գոյությունը վոչնչով չի կաշկանդել մեր այն քննադատությունը, որը ազատությունը, վոր տարվել է ընդհանուր գործադուլի ժամանակ գլխավոր խորհրդի դավաճանական վարքագծի նկատմամբ: Ռեֆորմիստների հետ վորոշ համաձայնությունն մեջ մտնելով, մենք լիովին պահպանել ենք մեր գաղափարական ինքնուրույնությունն և անհաշտությունը: Մենք հաստատ ու բարձրաձայն հայտարարել ենք անգլիական բանվորներին, թե նրանք, վորոնց դուք մինչև հիմա վստահել եք անգլիական արհաժարժման բաղժը, խայտառակ կերպով մատնել են հսկայական գործադուլը:

Անգլո-ուսական կոմիտեյի նիստն ընդհանուր գործադուլից հետո մենք ոգտագործել ենք, վորպեսզի գլխավոր խորհրդից պահանջենք վճռական ոգնություն պայքարող հանքագործներին: Միաժամանակ, մենք, իհարկե, հաշվի չենք առել, թե մեր առաջարկները կընդունվեն գլխավոր խորհրդի լիդերների կողմից: Բայց մենք հասնում ենք այլ նպատակի.—հանքագործներին ոգնելու առթիվ գլխավոր խորհրդի յուրաքանչյուր նոր մերժումը մեզ տալիս է նոր հնարավորություններ Անգլիայի բանվորական մասսաների առջև գլխավոր խորհրդի լիդերներին մերկացնելու համար:

1917 թվին բայլշևիկներին հարկ է լիղել նստելու միևնույն խորհրդում մենշևիկների ու եսերների հետ, վորոնք բուրժուազիայի հետ միասին պայքարել են բանվոր դասակարգի դեմ: Սակայն բայլշևիկները չեն հեռացել խորհուրդներից, այլ մնալով այնտեղ,

կատաղի պայքար են մղել համաձայնողականներին մերկացնելու համար, բանվորական մասսաներին նվաճելու համար: Այնպես և այժմ, մենք չպեճեք և զուրս գանք անգլո-ուսական կոմիտեյից, չպեճեք և զուրս գանք արհմիությունից, այլ մնալով ճրանց մեջ, պեճեք և ոգտագործեճեք յուրաքանչյուր հեռավորություն համաձայնողականներին մերկացնելու լեվ բանվորների մասսաները նվաճելու համար:

Անգլո-ուսական կոմիտեյից դուրս գալու մասին ոպպոզիցիայի «հեղափոխական» ֆրագներն իրենցից ներկայացնում են ծայրահեղ-ձախ թեքում: Ձախ խոսքերի տակ թաղնված և աջ գործը.—ոպպոզիցիայի տակտիկան անխուսափելիորեն կհանգեր նըրան, վոր կխախտվեր բանվորական մասսաներին կապելու և նրանց դաստիարակելու առթիվ տարվող մեր աշխատանքը:

Անգլիայի ընդհանուր գործադուլը նպաստում է միջազգային արհաժարժման ոգտին տարվող պայքարի հաջողություն: Բայց դրա համար տնհրաժեշտ է ըզգուշանալ լենինյան գծից շեղվելուց և ուժեղացնել բանվորների մասսաներին կապվելու աշխատանքը:

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՆՊԱՍ-
ՏՈՒՄ ԵՆ ԿՈՄՄՈՆԻՍՏ-
ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՁՈՂՈՒԹՅԱՆ
Կապիտալիզմը հարձակում է գործում աշխատավարձի և բանվորական որվա վրա: Աճում է նոր պատերազմների վտանգը: Բանվոր դասակարգն ավելի ու ավելի համոզվում է, վոր կապիտալիստական հասարակակարգի շրջաններում հեռանկարներ չկան բավարարելու պրոլետարիատի անգամ կենսական պահանջները:

Կապիտալի հարձակման հանդեպ բանվորն սկըսում է զգալ, թե վորքան ցրված են պրոլետարիատի

ուժերը, թե վորքան անհրաժեշտ է նրա միաձուլվել յերու-
թըն ընդդեմ կապիտալի: «Միասնության հասնելու
ձգտումը, տարբեր չերկիրների բանվորական լայն մաս-
սաների մեջ վերջին շրջանում չերևան է Գալիս հա-
տուկ թափով...: Միասնության հասնելու ձգտումը
ներկայիս պայմաններում հանդիսանում է դասակար-
գային պայքարի հիմունքով միասնության հասնելու
ձգտում» (Կոմիստերնի Գործկոմի 6-րդ պլենումի բա-
նաձևից):

Վորքան ուժեղ կլինի բանվորի համոզմունքն
այդպիսի միասնության անհրաժեշտության մեջ, այն-
քան պարզ կլինի նրան, թե ռեֆորմիստները, բան-
վոր դասակարգի շահերի համար, անգամ նրա ամի-
նակենսական կարիքների համար վոր և է պայքար
մղելու անընդունակ են: Այնքան ավելի հեշտությամբ
կյուրացվեն միասնական ճակատի լոզունգները:

Ամեն ինչ կախված է կոմունիստների աշխա-
տանքից, բանվորական մասսաներին կոմունիզմի հա-
մար նվաճելու առթիվ տարվող կոմունիստների Բա-
մառ, հաստատակամ, բոլոր խոչնդոտներն ու արգելք-
ները հաղթահարող աշխատանքից:

Նվաճել անկուսակցական բանվորների մասսա-
ները, նվաճել սոցիալ-դեմոկրատների յետևից գնացող
բանվոր դասակարգի շերտերը—այդ է Կոմիստերնի
գլխավոր անելիքը:

3. Պայքար գյուղացությանը նվաճելու համար

ՆՎԱՃԵԼ ԳՅՈՒՂԱԳՈՒ-
ԹԵՄՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹԵՄՆ ՀԱ-
ՄԱՐ

Կոմունիստական կուսակ-
ցությունները պետք է նվա-
ճեն վոչ միայն բանվորական
մասսաները, այլ և նախա-

պատրաստեն առաջա պրոլետարական հեղափոխու-
թյան համար պրոլետարիատի դաշնակիցներին:—այդ-
պիսին առաջին հերթին հանդիսանում է գյուղացու-
թյունը: Մենք գիտենք թե ինչ հսկայական դեր է խա-
ղացել գյուղացությունը ԽՍՀՄ-ում պրոլետարական
հեղափոխության հաղթանակի մեջ: Մենք գիտենք, վոր
բալլևիկների ճիշտ քաղաքականությունը գյուղացու-
թյան նկատմամբ, գյուղացության լայն մասսաներին
պրոլետարիատի կողմ նվաճելը հանդիսացել է բանվոր
դասակարգի հաղթանակի ամենագլխավոր պայմաննե-
րից մեկը:

Կապիտալիզմը հալածում է վոչ միայն բանվոր դա-
սակարգին, այլ և գյուղացական մասսաներին:

ԽՍՀՄ-ում, վորտեղ իշխանության գլուխ է կանգ-
նած բանվոր դասակարգը, պետությունն ոգաագոր-
ծում է բոլոր հնարավորություններն ոգնելու համար
չքավորին ու միջակին և սահմանափակում է կուլակի
շահագործական ձգտումները: Մենք այդ մասին ման-
րամասն կարդացել ենք հինգերորդ և վեցերորդ զը-
րույցներում: Կապիտալիստական չերկիրներում իշխող
բուրժուազիան, ընդհակառակն, իր ամբողջ իշխանու-
թյունն ոգաագործում է ուժեղացնելու համար գյուղի
կուլակային վերնախավը: Կապիտալիստական հասա-
րակարգի պայմաններում տեղի յի ունենում գյուղա-
ցական մասսաների անընդհատ աղքատացում, միջնդեռ
հարստանում է կուլակների սակավաթիվ խմբակը (հի-
շիր թե վեցերորդ զրույցում ինչ է գրել գյուղի զար-
գացման կապիտալիստական և սոցիալիստական ուղի-
ների մասին):

Հարկերի ծանրությունը, վորի մասին մենք կար-
դացել ենք նախորդ զրույցում, ընկնում է վոչ միայն

40

Կապիտալիզմը — բանվորների լեզ գյուղացուկյան լայն մասսաների ընդհանուր թեմամին է: Կոմկու- սակցուրքյուններին ճիշտ քաղաքականության դեպքում գյուղացուկյան մասսաները կը գնան պրոլետարական հեղափոխության լեռնակից:

Գյուղացիներսական բանվորները կազմում են պրո-
լետարիատի մեծ մասը: Նրանք աշխատում են գատ-գատ,

նրանց չի միացնում ֆարքիկան, նրանք կտրված են քաղաքից, նրանց մոտ հաճախ դեռ ուժեղ են մանր-սև-վաճառատիրական հալացքները: Ահա ինչու պլուդա-տնտեսական բանվորը — պրոլետարիատի հետամնաց մասերից մեկն է:

Կոմմունիստական կուսակցությունները պետք է
զորք զենն բոլոր ջանքերը գյուղատնտեսական բան-
վորներին դասակարգաչին դաստիարակության համար,
և նրանցից պատրաստեն պրոլետարական հեղափոխու-
թյան ակտիվ մարտիկներ: Առաջին հերթին նրանց
պետք է կազմակերպել արհեստակցական միություն-
ներում կալվածատերերի դեմ պայքարելու համար, աշ-
խատանքի չափազանց ծանր պայմանների բարելավ-
ման համար: Գյուղատնտեսական բանվորներին այդ
նույն վիճակում են գտնվում հող չունեցող գյուղացի-
ները կամ թե այն գյուղացիները, վորոնք այնքան
փոքր կտոր հող ունին, վոր ստիպված են գնալ և վարձ-
վել ավելի ունեւոր գյուղացիների մոտ:

Պրոլետարական հեղափոխութեան հնարան կա-
րող են լինել նույնպէս մանր գյուղացիները: Նրանց
անտեսութեան յեկամուտը հազիվ ե ըսվակտանաւում
ընտանիքը կերակրելուն: Կապիտալիզմի գոյութեան
պայմաններում գյուղացիների այդ խմբակն իր զրու-
թեանը լուրջ կերպով բարեւակելու առթիւ միջ մի հե-
ռաւակար չունի: Միայն պրոլետարական հեղափոխու-
թեանը հող կը տա մանր գյուղացուն: Նրա անմիջա-
կան շահերը զրկում են մանր գյուղացուն դաշինք կա-
պել բանվոր գաղակարգի հետ՝ ընդդէմ կապիտալի:

Կուլակը — պրոլետարական հեղափոխության թըշնամին է: Բատրակն ու չքավորը կարող են և պետք է դառնան պրոլետարիատի զաշնակիցը՝ բուրժուազիայի

տապալման գործում: Բայց կա դեռ չափազանց բազմաթիվ միջակ գյուղացու թիւը:

Միջակը իր մի կողմով հարում է կուլակին. միջակը կուտակում է վորոշ ավելցուկներ, նա հաճախ ոգտը վում ե՛քատրակների վարձու աշխատանքով: Իր մյուս կողմով միջակը հարում է չքավորին, վորովհետեւ միջակի չեկամուտի գլխավոր աղբւրը—իր անձնական աշխատանքն է: Միջակի տեղը գյուղատնտեսութեան մեջ տրամադրում է նրան մեծ տատանումներ կատարել բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև: Միջակը, ճիշտ է, այնքան շահադրդոված չի կապիտալիստական հատարակարգի պահպանմամբ (ինչպես, որինակ, կուլակը), բայց միջակը չի հանդիսանում և այդ հատարակարգի վորոշակի թշնամին, վորովհետեւ միջակի գոյութեան պայմաններն ավելի կամ պակաս չափով բավարարում են:

Ահա ինչու ընկ. Լենինն առաջադրել է միջակ գյուղացիութեան չեզոքացման լուրջագործ միջոց բանվոր դասակարգի կողմից իշխանութիւնը գրավելը: Կոմկուսակցութիւնները, ճիշտ քաղաքականութիւն վարելու դեպքում կարող են հասնել նրան, վորպէսզի միջակ գյուղացիութիւնը չաջակցի կապիտալիստներին իշխանութեան համար մղվող պայքարի վճռական բռնկին: Իշխանութիւնը գրավելուց և այն ամբողջակուց հետո բանվոր դասակարգը առաջադրում է միջակի հետ ամուր գաօրն կնքելու լուրջագործ: Գործնական շինարարութեան ընթացքում բանվոր դասակարգը ցույց է տալիս միջակին սոցիալիզմի շահավետութիւնը, և հնարավոր է լինում միջակին դարձնել պրոլետարիատի ամուր դաշնակիցը:

Այդ մենք տեսնում ենք մեր կուսակցութեան ո-

րինակով: Խորհրդային իշխանութեան ամբապնդվելուց հետո կուսակցութիւնը խնդիր է դրել ամուր դաշինք կնքել միջակի հետ: Սոցիալիզմը մենք կառուցում ենք միջակի հետ միասին:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇ-
ԽԱՏԱՆՔԸ ԿՈՄԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱ-
ՄԱՐ: Յոթերորդ գլուխում մենք կարդացել ենք ընկ. Լենինի խոսքերը, վոր կապիտալի դեմ մղված պայքարում, մեկուսացած տնտեսավարութիւնը, հետամնացութիւնը գյուղացիութեանը դնում է տատանվող վիճակում: Կապիտալիստական չեղիւրներում դեռ չափազանց ուժեղ է բուրժուազիայի ազդեցութիւնը նույնիսկ մանր գյուղացիութեան վրա:

Կոմմունիստները պետք է անդադար պարզապէս հեն գյուղացական մասսաներին, վոր նրանց շահերը գուցադիպում են բանվոր դասակարգի շահերին: Իրենց առորջա աշխատանքների ընթացքում կոմմունիստները պետք է կարողանան պաշտպանել գյուղացութեան շահերը: Կոմմունիստները պետք է ցույց տան աշխատավոր գյուղացուն, վոր միայն պրոլետարիատի հեղափոխական կուսակցութիւնն է պատրաստ վճռականապէս պայքարելու բուրժուազիայի դեմ, գյուղացական մասսաների ճշման դեմ:

ԳՅՈՒՂԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մենք մինչև հիմա խոսե-
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ցինք կապիտալիստական չեղիւր-
ների մասին: Այստեղ գյուղացութիւնը չափազանց բազմաբանակ է: Սակայն գյուղացութեան ավելի մեծ մասսաներ են ժողոված գաղութներում: Հնդկաստանում, Չինաստանում, Սիրիայում և Արեւելքի այլ չեղ-

կիրններում գյուղացութիւնը կազմում է բնակչութիւն ճշող մեծամասնութիւնը:

Գաղութային լերկիրներում գյուղացութիւնը հաւածվում է կրկնակի՝ կեղեքում են տեղացի կալվածատերերը և ոտարերկրյա իմպերիալիստները: Մենք աչգ տեսնում ենք Չինաստանի որինակում, ուր գյուղացական մասսաներին հարկադրում են շարունակ տուրք տալ զանազան չինական գեներալներին, ուր միևնույն ժամանակ գյուղացիութիւնը տեքում է իմպերիալիստների լծի տակ: Գաղութների մութ ու հետաքննալի գյուղացութիւնն ավելի ու ավելի քաշվում է ժողովրդական-ազատագրական շարժման մեջ:

Գաղութային լերկիրներում ևս ամուր հիմք է ստեղծվում բանվորների ու գյուղացիների միատեղ պայքարի համար:

Արդյունաբերութիւնն աճումը գաղութներում ստեղծում է պրոլետարիատի նորանոր կազմեր: Հեղափոխական պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային լիւրջութիւնը մենք տեսել ենք Չինաստանում: Հընդ-կաստանում, արդյունաբերական արագ աճումն ավելի ու ավելի մեծացնում է պրոլետարիատի նշանակութիւնն ազատագրական շարժման մեջ: «Աղգային-ազատագրական շարժումը գաղութներում հաստատապես աճում է, թուլացնում է իմպերիալիզմին և ամբարազում սոցիալիզմի համար մարտնչող բանվոր դասակարգին» (Կոմիւնտերնի Գործկոմի 6-րդ պլենումի բանաձևից):

Կոմիւնտերնը ամեն կերպ աջակցում է գաղութների ազատագրական շարժման, վորովհետեւ աչգ շարժումը ուղղված է ընդհանուր թշնամու դեմ, իմպերիալիզմի

դեմ, վորի ամենակարևոր հենարաններից մեկը հանդիսանում է գաղութները:

ԿՈՄԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ. Կապիտալիստական լերկիրներ-ներին ԲԱՅԼՇԵՎԻԶՄՅԱՆ բում կոմունիստական կուսակցութիւններն աշխատում են ծանր պայմաններում: Պրոլետարական հեղափոխութիւնն առժամանակ աճում է դանդաղ: Կոմունիստները կանգնած են բանվոր դասակարգի մեծամասնութիւնը նվաճելու ծանր պայքարի առաջ: Աչգ պայքարի հաջող ավարտման համար անհրաժեշտ է բայլչեիկյան կայունութիւն ու ղիմացկունութիւն: Կոմունիստական կուսակցութիւնները պիտք է ուսումնասիրեն և ոգտագործեն պրոլետարական պայքարի կուսակված ամբողջ փորձը, վորպեսզի մշակեն ճիշտ լենինյան քաղաքականութիւն:

Հատկապես հարուստ և ուսանելի չէ Համ.ԿԿ(բ.) պայքարի փորձը: Մեր կուսակցութիւնն ունի պրոլետարական հեղափոխութիւնն նախապատրաստման և բուրժուազիալի տապալման պայքարի ամենահարուստ փորձը: «Բայլչեիկյան կուսակել և տասնհինգ տարվա (1903—1917 թ. թ.) գործնական պատմութիւն, վորը իր փորձի հարստութեամբ նմանը հունի աշխարհին չերեսին» (Լենին): Հոկտեմբերյան հեղափոխութիւն ինքը տարում մեր կուսակցութիւնը կուսակել է պրոլետարիատի ղիկաւորութեայի ամբարազման համար մղած պայքարի հսկայական փորձ, սոցիալիզմի գործնական շինարարութիւնն փորձ:

Ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցութիւններն իրենց խնդիր են դնում ուսանել ՀամԿ(բ.) մարտական փորձը և հաստատապես կիրառել լենինյան գիծը:

Լենինյան, բայլչեիկյան վորով և լուծում կու-

միևնույն անհատը, թե ինչպես պետք է կառուցել կոմունիստական կուսակցությունները,—կուսակցություններ, վոր իրոք ընդունակ կը հանդիսանան պրոլետարիատին առաջնորդելու դեպի մարտ՝ բուրժուազիային տալով իրենց համարը: Կոմունիստական կուսակցությունները վերակառուցվում են ֆարքրիկա-գործարանային բջիջների հիմունքով, սահմանում են յերկաթի դիսցիպլինա, պաշարում են լենինյան ճիշտ քաղաքականության թեքումների դեմ:

Կոմիստերնը Համկ (բ.) կ'որինակով ուսանում է կոմունիզմի համար նվաճել բանվոր դասակարգի մասսաները: Բայլընիկներն ամենածանր պայմաններում պահպանել են կապը բանվորական մասսաների հետ և նրանց մեջ աշխատանք են տարել բարձրացնելու համար նրանց դասակարգային գիտակցությունը:

Մեր կուսակցության փորձը կարող է նույնպես գյուղացիության նկատմամբ տարվող ճիշտ քաղաքականության ուրինակ ծառայել: Բայլընիկներն իրենց քաղաքականությանը ապահովել են գյուղացիության աջակցությունը բանվոր դասակարգին 1917 թվի Հոկտեմբերին, իսկ ներկայումս մենք սոցիալիզմ ենք կառուցում չքավոր ու միջակ գյուղացիության հետ միասին: Կուսակցությունը լենինյան վոգով է լուծել մեր յերկրում Հափաղանց բարդ բնույթ կրող ազգային հարցը: Կոմկուսակցությունների ճիշտ քաղաքականությունը գյուղացական և ազգային հարցերում բացառիկ նշանակություն ունի պրոլետարական հեղափոխության ուժերի նախապատրաստման համար:

Ահա ինչու Կոմիստերնի 5-րդ կոնգրեսը առաջադրել է կոմունիստական կուսակցությունների բայլընիզային լոզունգը: Բայլեմիզացիա նշանակում

է թե կոմկուսակցությունները պետք է մշակեն պայ-
քարի միտք լենինյան գիծ, յեվ զառնան պրոլետարի-
սի բայլեմիզյան ավանգարդ:

Այդ ձևը է բերվում հետզհետե, Կոմիստերնի համառ ջանքերի շնորհիվ: Քանի գնում, այնքան ավելի հարստանում է առանձին կոմկուսակցությունների պաշարի սեփական փորձը: Հաղթանակների ու պարտությունների փորձով կապիտալիստական յերկիրներ կոմունիստները սովորում են գործնականում կենսագործել լենինիզմը:

ՀԱՐՑԱՅՈՒՑՈՒԹՅԱՆ

1) Ինչպիսին են Կոմիստերնի կառուցման սկզբունքները:

2) Վճիրն է միասնական ճակատի տակտիկայի հիմնական նպատակը:

3) Վճիրն է Կոմիստերնի զիծը գյուղացիության խնդրում:

4) Ինչպիսին է Կոմիստերնի տակտիկան գյուղացիների ազատագրական շարժման նկատմամբ:

5) Ինչ՞ա Համկ(բ.) կ'զեկավարում է Կոմիստերնին:

6) Խոչ է նշանակում և ինչո՞ւմ է կախում բուրժուական յերկիրների կոմկուսակցությունների բայլընիզացիան:

ԱՇԽԱՏԱՆԻՔ

1) Իմացիր, արդյոք, գործարանում կոմբջիջ վորեք կապ հանի արտասահմանյան կոմունիստական բջիջների հետ: Յեթի գրագրություն է տարվում—ծա-

նութացիր նրան և բովանդակութեան մասին պատմիր պարապմունքի ժամանակ:

2) Մի շարաթիվա ընթացքում հետևիր միջազգային զբոսընթացի վերաբերող լրագրային հեռագրերին ու հոգովածներին և պարապմունքի ժամանակ պատմիր թե՛

ա) Ի՞նչպես է ընթանում բանվորների միասնական ճակատի համար մղվող պայքարը:

բ) Ի՞նչով է արտահայտվում կապիտալի հարձակումը և ինչպես է դրան պատասխանում բանվոր դասակարգը:



«Ազգային գրադարան»



NL0187189

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

